Ի.

ՎԵՐՋԱԲԱՆ

Բազմագէտ ու բազմաշրջիկ Եւրոպացի մը՝ քանի մը տարի առաջ՝ յայտնելով հանդերձ իր մասնաւոր համակրութիւնն Հայոց վերաբերումով՝ կըսէր մեզի «Բովանդակ Փոքր-Ասիան ու Կ. Պոլիսը մեծ մասով պրտտեցայ և իմաստասիրեցի ու դիտեցի որ Հայք չահու համար ամէն բան կընեն, այո՛, ամէն բան. և ասա՝ աղէկ նշան մը չէ. ես Հայերը սիրելուս համար կըսեմ ձեզի զայս»: Շահու կամ ստակի համար ամէն բան. Աստուա՛ծ իմ. ըսել է չենք խղճեր եղեր գործել ամէն մեղք՝ մեղքին ամենամեծին՝ աւելաշահութեան Մամոնայի (1) համար. եթէ վկայութիւնը բարձրէն գիտուն

(1) Մամոնայի ու աւելաստացութեանց ինքնակործան յիմարութեան վրայ սքանչելի՛ կըսէ Օրթոտոքս մեծ եկեղեցին մեծ Դեմոսթէնը, Յ. Ոսկեբերան, զոր ուզողը կրնայ աշխարհաբառի թարգմանել տալով հասկընալ մամոնայի աշխարհին բո՛ւն վիճակը.—

Ի սովոյ հարկէ չգիտեմ վայրապար զոք վախճանեալ. բանգի մարթի բազում ինչ յամենայն կողմանց հնարել այնմ աղետից մխիթարութիւն. իսկ վասն ընչից և մեծութեան և այնպիսի շահաւորութեանց ըզբազումս իսկ ցուցանեմ քեզ կոտորեալս, զոմանս գաղտ և զոմանս ի հրապարակի, և բազում այնպիսի նշանակօք լի են ճանապարհք և ատեանք և հրապարակք. նաև զծուլս իսկ լցեալ արեամբք տեսանիցես։ Զի ո՛չ զերկիր միայն կալաւ այն բռնութիւն, այլ և զհամատարած անդունդսն աղխազխեաց ելից բազում անօրէնութեամբ. ոմն նաւարկեալ շրջի վասն ոսկւոյ, և ոմն սպանանի վասն նորին, դարձեալ նոյն բռնութիւն զոմն ընչաւէտ արար, և զոմն սպանող։ Եւ արդ զի՞նչ չյուսալի քան զմամոնայն կայցէ, յորժամ վասն նորին և տար աշխարհս հարկանիցես,